Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

2014 ԹՎԱԿԱՆԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղաքականության վերլուծություն

ՀՀ Շիրակի մարզում պետական մշակութային քաղաքականությունը իրականացվում է Շիրակի մարզպետարանի կողմից՝ տարբեր ենթակայությունների հետևյալ կազմակերպությունների միջոցով. քոլեջների, վարժարանների, 3 նվագախմբերի, 47 մշակույթի տների և ակումբների, 13 երգչախմբերի, 1 դրամատիկական թատրոնի, 1 տիկնիկային թատրոնի, 3 գեղարվեստի դպրոցների, գեղարվեստական կրթության ԲՈՒՀ-երի 3 մասնաճյուղերի, 8 թանգարանների, 97 գրադարանների, 28 գեղարվեստական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների (11 երաժշտական, 14 արվեստի, 2 գեղարվեստի, 1 պարարվեստի դպրոց), որտեղ սովորում է 3078 աշակերտ, դասավանդում՝ 453 մանկավարժ:

Մարզում գործում է 22 մանկական երգչախումբ:

Մշակույթի ոլորտում ՀՀ Շիրակի մարզում ՀՀ Կառավարության կողմից իրականացվող համապետական ծրագրերը պայմանավորված են ՀՀ Կառավարության գործունեության միջոցառումների ծրագրով: ՀՀ մարզերում մշակույթի համաչափ զարգացման ապահովումը ՀՀ կառավարության որդեգրած մշակութային քաղաքականության մեջ կարևոր և հիմնական ուղղություն է: 2014 թվականին իրականացված ծրագրերը ընդհանուր առմամբ նպատակ ունեն բաձրացնելու մշակույթի դերը, պահպանելու ազգային մշակութային արժեքները:

ՀՀ Շիրակի մարզի 2014-2017 թթ. սոցիալ - տնտեսական զարգացման ծրագրի 2014 թվականի տարեկան աշխատանքային պլանով Շիրակի մարզի մշակույթի ոլորտի առաջնային ռազմավարական նպատակներն են՝

Մշակույթի համակարգի գործունեության և կառավարման արդյունավետության զարգացումը, բյուջետային միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործումը, ոլորտի աշխատողների կարողությունների զարգացմանն ուղղված բարեփոխումների շարունակումը, մասնագիտական կրթության բնագավառում համապատասխան բարձր որակի ապահովումը:

Շիրակի մարզի մշակույթի ոլորտում 2014 թվականի ընթացքում կատարված աշխատանքները ուղղված են եղել մշակույթի պետական քաղաքականության գերակայությունների՝ մշակույթի պահպանման, տարածման և զարգացման հիմնական ուղղությունների իրականացմանը: Մշակույթի ոլորտում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են պետական մշակութային քաղաքականությունից բխող տարաբնույթ միջոցառումներ՝ կապված ՀՀ ազգային և պետական տոների, հոբելյանական միջոցառումների արժևորման, հոգևոր և նյութական մշակութային ժառանգության պահպանման և զարգացման հետ: Կազմակերպված և անցկացված միջոցառումների ոչ ֆինանսական ցուցանիշը գերազանցել է նախատեսվածը:

Իրականացման առաջընթացը

Կազմակերպվել և համակարգվել է մարզային ենթակայության երկու թանգարանների, երկու համերգային կազմակերպությունների և մեկ արվեստի դպրոցի աշխատանքները:

Շարունակվել է արդյունավետ համագործակցությունը մարզում գործող տարբեր ենթակայությունների և իրավական նշանակության մշակութային հաստատությունների հետ:

Մշակվել և ՀՀ մշակույթի նախարարություն է ներկայացվել Շիրակի մարզի մշակութային կազմակերպությունների 2015-2017 թթ միջնաժամկետ ծախսային ծրագիրը, մարզի տաղանդավոր և շնորհալի երեխաների տվյալների բազան, տեղեկատվություն՝ Երաժշտական և արվեստի դպրոցներում ուսուցման վարձավճարի փոխհատուցմամբ ազգային, լարային և փողային նվագարանների դասարաններում սովորողների վերաբերյալ:

Կազմվել և Շիրակի մարզի 2014-2017 թթ սոցիալ տնեսական զարգացման ծրագրում է ներառվել մշակույթի քառամյա զարգացման ծրագիրը:

Հստակեցվել և ՀՀ քաղաքաշինության նախարություն է ներկայացվել կրթական, մշակութային և մարզական օբյեկտների առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման մասին տեղեկատվություն: ՀՀ մշակույթի նախարարության միջնորդությամբ ՀՀ տարածքային կառավարման նախարարությանն է առաջարկվել Գյումրու <<Ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան>> ՊՈԱԿ-ի մասնաճյուղ Ս. Մերկուրովի տուն-թանգարանի հիմնանորոգման (ներառյալ նախագծանախահաշվային) աշխատանքներն ընդգրկել 2014 թվականի Հայաստանի սոցիալական ներդրումների համայնքային ծրագրերում: Քննարկվել և ՀՀ մշակույթի նախարարությանն է ներկայացվել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Շիրակ և Արթիկ թեմերի եկեղեցիները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին հանձնելու ենթակա եկեղեցիների ցանկը:

Հավաքագրվել և ՀՀ մշակույթի նախարարություն է ներկայացվել ՀՀ-ում և ԼՂ-ում տաղանդավոր պատանի երաժիշտ կատարողների զարգացման և կատարելագործման նպատակային ծրագրին ՀՀ Շիրակի մարզից մասնակիցների մասնակցության հայտերը:

ՀՀ պետական բյուջեից երաժշտական արվեստի դպրոցների ազգային, լարային և փողային բաժիններում սովորողների ուսման վարձավճարի փոխհատուցման պետական ծրագրի շրջանակներում կազմակերպվել է թվով 19 երաժշտական և արվեստի դպրոցների 377 սովորողների ուսման վարձավճարի փոխհատուցման գործընթացը:

Ճշգրտվել և ՀՀ մշակույթի նախարարություն է ներկայացվելվել Շիրակի մարզի տարբեր համայնքներում մինչև 1991 թվականը տեղադրված խորհրդային գործիչներին, սոցիալիստական գաղափարներին և այդ ժամանակաշրջանի իրադարձություններին նվիրված հուշարձանների կամ քանդակների առկայության կամ հանված լինելու վերաբերյալ տեղեկատվություն:

ՀՀ մշակույթի նախարարության <<Հաշմանդամություն ունեցող շնորհալի երեխաների>> տեղեկատվական բանկի համալրման նպատակով ՀՀ մշակույթի նախարարություն է ներկայացվել արվեստի բնագավառում ՀՀ Շիրակի մարզի հաշմանդամություն ունեցող շնորհալի երեխաների վերաբերյալ տեղեկատվություն:

Կազմվել և ՀՀ մշակույթի նախարարություն է ուղարկվել ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից Հովհաննես Շիրազի 100-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շրջանակներում անցկացվելիք միջոցառումների ծրագիրը:

ՀՀ մշակույթի նախարարություն է ներկայացվել 2013-2014 թվականների ընթացքում ՀՀ Շիրակի մարզի մշակութային օբյեկտներում իրականացված ներդրումների վերաբերյալ

(շինարարություն, հիմնանորոգում, գույքի և սարքավորումների, հակահրդեհային ահազանգման և տեսահսկման համակարգերի ձեռքբերում) տեղեկատվություն:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թ. սեպտեմբերի 11-ի N 1058-Ն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված մշակութային արժեքների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանի տեխնիկական առաջադրանքի մշակման գործընթացի իրականացման նպատակով ՀՀ մշակույթի նախարարություն է ներկայացվել մշակութային արժեքների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանի տեխնիկական առաջադրանքը կազմելու համար պահանջվող տեղեկատվություն:

Մարզի երիտասարդության ոլորտի շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությամբ կազմակերպվել են մի շարք քննարկումներ՝ «Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական գործընթացներին մարզային երիտասարդության մասնակցության արդյունավետ մեխանիզմների ստեղծման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի հետ կապված, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ:

Համաձայն ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի և ՀՀ մշակույթի նախարարի համատեղ հրամանի մշակույթի ոլորտի և ենթակառուցվածքների ուղղությամբ վարչական ուսումնասիրություններ են իրականացվել ՀՀ Շիրակի մարզի Արևշատ, Այգաբաց, Կապս, Տուֆաշեն, Մարալիկ, Հառիճ, Սառնաղբյուր, Վահրամաբերդ համայնքներում:

ՀՀ մշակույթի նախարարության <<Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայության>> տնօրինության հետ 2014թ. իրականացվել է Շիրակի մարզի պատմության և մշակույթի հուշարձանների պահպանման և օգտագործման գործընթացի վերահսկողություն:

ՀՀ Շիրակի մարզպետարանում քննարկվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ներկայացված «Հայրենասիրական դաստիարակության 2015-2019 թթ. պետական ծրագիրը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագիծը:

Համապատասխան ուսումնական հաստատությունները տեղեկացվել են «Հանրապետության երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների շրջանառու հիմնադրամ» ծրագիրի մասին, ինչի արդյունքում «Մշակութային կրթության աջակցության» հիմնադրամին են ներկայացվել ծրագրի մասնակիցության հայտերը:

««Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակման համար ՀՀ մշակույթի նախարարություն է ներկայացվել ՀՀ Շիրակի մարզում գեղարվեստական կրթություն իրականացնող դպրոցների սովորողների, աշխատողների և մանկավարժների վերաբերյալ համապատասխան տեղեկավությունը:

<<Ոսկե Գավաթ-2014>> պարարվեստի Հայաստանի բաց առաջնություն անցկացնելու նպատակով <<Յագուար-պրոդակշն>> Պրոդյուսերական կենտրոնին են տրամադրվել ՀՀ Շիրակի մարզում գործող պարային խմբերի տվյալները:

«Երիտասարդական մրցանակաբաշխություն-2014»-ին մասնակցելու համար ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն է ներկայացվել «Մեղվիկ», «ԼոգոՍ» և «Գյումրու

Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունների թեկնածությունները և գործունեության մասին տեղեկատվությունը:

Տարվել են անհրաժեշտ աշխատանքներ՝ «Մշակութային կազմակերպություն-դպրոց» աբոնեմենտային համակարգի ներդրման պիլոտային ծրագրին մասնակցության շրջանակներում:

ՀՀ Շիրակի մարզպետի որոշմամբ ստեղծվել է ՀՀ Շիրակի մարզպետին առընթեր երիտասարդական խորհուրդ:

2014 թվականի դեկտեմբերի 12-ին ՀՀ ԱԺ-ում տեղի են ունեցել <<Մշակութային քաղաքականության ռազմավարական հիմնախնդիրները և դրանց կարգավորման մարտահրավերները>> թեմայով խորհրդարանական լսումներ, որտեղ ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ա. Դավթյանը ներկայացրել է <<Մշակութային քաղաքականության ազգային հիմնախնդիրներն ու միջազգային կարգավորումները>> թեմայով զեկույց, իսկ ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ Ա. Պողոսյանի կողմից ներկայացվել է <<ՀՀ մշակույթի պետական քաղաքականության առկա վիճակը>>:

Մշակույթի ոլորտում 2014 թ. ընթացքում իրականացվել են պետական մշակութային քաղաքականությունից բխող տարաբնույթ միջոցառումներ՝ կապված ՀՀ ազգային և պետական տոների, հոբելյանական միջոցառումների արժևորման, հոգևոր և նյութական մշակութային ժառանգության պահպանման և զարգացման հետ: Նշված ժամանակահատվածը բովանդակալից է եղել միջմարզային և միջազգային համագործակցության հարթակներում:

Հունվար ամսին Գյումրու Վարդան Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնում կազմակերպվել և անց է կացվել Հայոց բանակի ստեղծման 22-ամյակին նվիրված մշակութային միջոցառումը՝ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:

Փետրվար ամսին Գյումրու Մայր Հայաստան հուշահամալիրի տարածքում անց են կացվել Գյումրու ձմեռ, Սուրբ Սարգիս մարզամշակութային միջոցառումները:

Ապրիլին Հայ առաքելական եկեղեցու Շիրակի թեմի սոցիալ կրթական կենտրոնին ցուցաբերվել է համապատասխան աջակցություն՝ Սուրբ զատկի տոնին նվիրված «1 զամբյուղ = ուրախ զատիկ» ակցիայի շրջանակներում:

Մարտի 25 - մայիսի 3-ը Շիրակի մարզի երաժշտական և արվեստի դպրոցներում գործող երգչախմբերը մասնակցել են Կոմիտասի 145-ամյակին նվիրված «Երգող Հայաստան» մանկապատանեկան երգչախմբերի 7-րդ հանրապետական մրցույթ-փառատոնին:

Ապրիլի 7-ին կազմակերպվել և անց է կացվել ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորված «Մայրության և գեղեցկության տոն» մշակութային միջոցառումը:

2014թ ապրիլ-մայիս ամիսներին <<Փյունիկ>> հիմնադրամի աջակցությամբ ԵՊԿ Գյումրու մասնաճյուղի կողմից Գյումրիում կազմակերպվել և անց է կացվել Երաժիշտ-կատարողների «Վերածնունդ» մանկապատանեկան 6-րդ մրցույթ-փառատոնը, որին մասնակցել է 33 երկրների 2706 երաժիշտ-կատարող (ՀՀ Շիրակի մարզից մասնակցել են 14 ուսումնական հաստատությունից՝ 170 աշակերտներ):

2014 թ. մայիսի 17-ին «Թանգարանների գիշեր», իսկ մայիսի 18-ին՝ Թանգարանների միջազգային օրվա «Թանգարանները միավորում են մեզ» խորագրով միջոցառումների

շրջանակներում Շիրակի մարզի թանգարաններում կազմակերպվել և անց են կացվել տարաբնույթ միջոցառումներ:

Մայիսի 28-ին մարզի խոշոր համայնքներում կազմակերպվել են տարաբնույթ միջոցառումներ՝ նվիրված առաջին Հանրապետության տոնին:

Մարզի երաժշտական և արվեստի դպրոցներում անց են կացվել տարեվերջյան հաշվետու համերգներ, որոնք միտված են եղել գեղարվեստական կրթության որակի գնահատմանը, նոր տաղանդների բացահայտմանը և մրցակցային դաշտի ապահովմանը:

Շիրակի մարզպետարանի ենթակայությամբ գործող Ամասիայի մանկական արվեստի դպրոց ՊՈԱԿ-ում կազմակերպվել և անց է կացվել դպրոցի հիմնադրման 50-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառում:

ՀՀ ազգային ժողովի կողմից կազմակերպված «Փարաջանովի հետադարձ լույսը» ծրագրի շրջանակներում մայիս-հոկտեմբեր ամիսների կազմակերպվել է ծրագրին մասնակից ստեղծագործող պատանիների այցելությունը Փարաջանովի թանգարան: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են սեմինար պարապմունքներ՝ մասնակիցների համար: Կազմակերպվել է փառատոնի մարզային փուլը եզրափակող ցուցահանդես, որտեղ ցուցադրվել են ծրագրի մասնակից մարզի ներկայացուցիչների աշխատանքները, որոնցից հաղթողները ցուցադրվել են ծրագրի հանրապետական փուլի ժամանակ՝ ԱԺ սրահում:

Հունիսի 15-ին մարզի հանրակրթական և մարզամշակութային հաստատություններն անց են կացրել մի շարք միջոցառումներ՝ նվիրված ՀՀ պետական խորհրդանիշների հանրահռչակման տոնին:

Հունիսի 28-ին Արփենի գյուղում Հայրենիքի զարգացման նախաձեռնություն հիմնադրամի կողմից կազմակերպվել և անց է կացվել <<Տարազի փառատոն>>-ը:

Հունիսի 29-ին կազմակերպվել են <<Անհայտ կորած ազատամարտիկի հիշատակի օրվան>> նվիրված միջոցառումներ:

Հուլիսի 1-ին կազմակերպվել և անց է կացվել ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորված <<Շիրակ-Ջավախք>> մշակութային միջոցառումը:

Հուլիսի 4-ին անց է կացվել ՀՀ սփյուռքի նախարարության կողմից կազմակերպված <<Իմ Հայաստան>> համահայկական 2-րդ փառատոնի <<Պարարվեստ>> միջոցառումը, որի մասնակիցները ճանաչողական այցով շրջեցին Հառիճի վանական համալիրի տարածքում, իսկ օգոստոսի 3-ին՝ <<Խմբերգային արվեստ>> միջոցառումը, որի մասնակիցները՝ շրջեցին Մարմաշենի վանական համալիրի տարածքում:

Հուլիսին կազմակերպվել է <<ԲԱՋԵ 2014>> համահայկական երիտասարդական հավաքի Շիրակի մարզային ջոկատի ընտրության փուլը և ապահովվել է մարզային ջոկատի մասնակցությունը հավաքին:

Օգոստոսի 25-30-ը ՀՀ Շիրակի մարզի տարածքում կազմակերպվել և անց է կացվել ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորված <<Մինասի գույներով>> խորագիրը կրող <<Երիտասարդ նկարիչների միջազգային երրորդ Պլեներ>> մշակութային միջոցառումը, որը իր շուրջ էր համախմբել թվով 65 երիտասարդ նկարիչներ ՀՀ բոլոր մարզերից, քաղաքամայր Երևանից, ՌԴ Մոսկվա քաղաքից, Բելոռուսի հանրապետությունից, Վրաստանի հանրապետության Թբիլիսի քաղաքից և Ջավախքի շրջանից:

Սեպտեմբերի 5-ին Գյումրու <<Հոկտեմբեր>> կինոթատրոնում <<Ոսկե Ծիրան>> միջազգային կինոփառատոնի շրջանակներում կազմակերպվել է <<Կինոէքսպրես Հայաստան-Վրաստան>> ծրագիրի շրջանակներում հերթական միջոցառման անցկացումը:

Սեպտեմբերի 27-28-ը Հայաստանի Հանրապետությունում «Հետադարձ հայացք 100 տարի անց» խորագրի ներքո անցկացվեցին Եվրոպական ժառանգության օրերի միջոցառումները:

Սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին անց է կացվել <<Երգը բարեկամության կամուրջ է>> հանրապետական 3-րդ փառատոնի մարզային փուլը, որի հաղթողները մասնակցել են փառատոնի հանրապետական փուլին:

Սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին կազմակերպվել է ՀՀ ազգային ժողովի նախագահի հովանու ներքո անցկացված ասմունքի մանկապատանեկան 8-րդ փառատոնի տեղային և մարզային փուլերը:

ՀՀ Շիրակի մարզում <<Էպոսասացության փառատոն>> միջոցառման շրջանակներում կազմակերպվել և անց են կացվել մի շարք միջոցառումներ՝ նվիրված <<Սասնա ծռեր>> էպոսին:

ՀՀ Շիրակի մարզի հանրակրթական դպրոցների աշակերտները մասնակցել են <<Հովհ. Թումանյանի տուն-թանգարան>> ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված և անցկացված <<Երկնքից երեք խնձոր ընկավ…>> հեքիաթասացության հանրապետական մրցույթ-փառատոնին:

Հ. Շիրազի ծննդյան 100-ամյա հոբելյանական միջոցառումների շարքը եզրափակվեց Գյումրու «Վարդանանց» հրապարակում անցկացված հանդիսավոր տոնակատարությամբ: Գյումրու փողոցներից մեկը անվանակոչվեց Հ. Շիրազի անվամբ, տպագրվեց և հրապարակվեց Հ. Շիրազի «Թոնդրակեցիներ» պոեմը:

ՀՀ Շիրակի մարզի Հառիճի վանական համալիրի տարածքում հանրապետությունում առաջին անգամ կազմակերպվել և անց է կացվել հոգևոր երգերի մարզային փառատոն՝ նվիրված Կոմիտաս Վարդապետի ծննդյան 145-ամյակին: Ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ կազմակերպված փառատոնին հոգևոր երգի կատարումներով մասնակցել են Շիրակի մարզի Գյումրի, Արթիկ, Ախուրյան, Ազատան, Ամասիա համայնքների երաժշտական, արվեստի և հանրակրթական դպրոցների մանկական երգչախմբերը, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Արթիկի թեմի «Սաղմոս» երգչախումբը, ինչպես նաև անհատ կատարողներ Կոմիտասի անվան կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղից /մոտ երեք հարյուր հոգի/:

Հոկտեմբերի 19-ին ՀՀ երիտասարդական հիմնադրամի Շիրակի մարզային կենտրոնի և <<Վարդևանյան>> պարի ստուդիայի հետ համատեղ կազմակերպվել է Պարի ամենամյա մարզային ստուգատես-փառատոնը:

Մեծ շուքով և բազմաբովանդակ միջոցառումների շարքով նշվել է <<Գյումրու օր>> տոնակատարությունը:

Անց են կացվել մի շարք միջոցառումներ նվիրված ավանդական տոների, ծեսերի արժևորմանը և տարածմանը, մասնավորապես. <<Հացի փառատոնը>>, <<Ազգային ուտեստների փառատոնը>>, <<Արհեստների և արվեստների փառատոնը>>:

Հոկտեմբերի 17-19-ը անցկացված Շիրակ-Արցախ մշակութային փառատոնի շրջանակներում ճանաչողական այցով Շիրակի մարզում հյուրընկալվեց ԼՂՀ Ասկերանի վարչական շրջանի կրթության, մշակույթի և սպորտի ոլորտի 30 հոգանոց պատվիրակությունը: Աշխատանքային հանդիպում-քննարկումներից բացի հյուրերի համար կազմակերպվեց նաև Գյումրու ժող.

գործիքների և Սիմֆոնիկ պետական նվագախմբերի համերգ: ԼՂՀ Ասկերանի վարչական շրջանի պատվիրակությունը նաև ներկա գտնվեց ՀՀ Շիրակի մարզի Հառիճի վանական համալիրի տարածքում հանրապետությունում առաջին անգամ անցկացված Կոմիտասի 145-ամյակին նվիրված հոգևոր երգերի մարզային առաջին փառատոնին:

2014 թ. հոկտեմբերի 22-ին Գյումրիում բարերար Օյունջյանների հովանավորությամբ բացվել է «Վարդուհի» արվեստի դպրոցը: Հայաստանում մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի համար ամերիկաբնակ բարերար Ջոն Հովհաննես Օյունջյանը պարգևատրվել է ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալով:

Հոկտեմբերի 24-26-ը <<Միջմարզային երիտասարդական փառատոն>>-ի շրջանակներում Շիրակի մարզի մշակութային պատվիրակությունները իրենց ելույթներով հանդես են եկել Լոռու մարզում:

2014 թվականի նոյեմբերի 17-ին ՀՀ մայրաքաղաք Երևանում անցկացված <<Հայրենասիրական համերգ>> մասսայական միջոցառումը նվիրված է եղել Ուսանողության միջազգային և երիտասարդության համաշխարհային օրվան, որին մասնակցել է Շիրակի մարզի 500 հոգուց բաղկացած պատվիրակությունը:

Հայ առաքելական եկեղեցու Շիրակի թեմի սոցիալ-կրթական կենտրոնի երիտասարդական բաժնի հետ համատեղ <<Ուսանողության միջազգային օրվան>> ընդառաջ կազմակերպվել և անց է կացվել <<Ուսանողության միջազգային օր>> <<Ուսանողական - երիտասարդական շաբաթ>>:

Նոյեմբերի 16-ին կազմակերպվել և անց է կացվել ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորված <<Ուսանողության միջազգային օր>> մշակութային միջոցառումը:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ 2014-2017ԹԹ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2014Թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԸ

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Պատասխանատու օղակ	Տեղեկատվություն կատարման վերաբերյալ
Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ	Թանգարանային գործունեության խթանում, մշակութային ժառանգության պահպանում	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Մարզպետարանի ենթակայության Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի (Գիտա-լուսավորչական, մասսայական, կազմակերպչական աշխա-տանքների գծով ընդունել է 9447 այցելու, տարվել է 492 էքսկուրսիա, կազմակերպվել են տարբեր գեղանկարիչների ստեղծագործութ-յունների ցուցադրությունները (7 ցուցահանդես)) և Շիրակի երկրագիտական (Շիրակի երկրագիտական թանգարանի արշավախումբը շարունակել է իրականացնել հնագիտական պեղումները է Երերույքի, Մեծ Սեպասարի վաղ բրոնզիդարյան բնակավայրի, Ազատանի և Ջրափիի հնավայրերի, Մախյանի մ.թ.ա. 1-ին

			հազարամյակի սկզբների նորահայտ դամբարանադաշտի, Հայկաձորի երկաթի լայն տարածման ժամանակաշրջանի ամրոց բնակավայրի տարածքներում) թանգարանները օրենքով սահմանված կարգով իրականացրել են թանգարանային գործունեությունը:
Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ	Համերգային գործունեության խթանում, երաժշտարվեստի զարգացում	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Գյումրու ժող. գործիքների և սիմֆոնիկ պետական նվագախմբերը իրականացրել են իրենց համերգային գործունեությունը: (Գյումրու սիմֆոնիկ պետական նվագախումբը 2014 թվականի ընթացքում տվել է 18 համերգ, Գյումրու ժող. գործիքների պետական նվագախումբը 20 համերգ)
Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային, փողային նվագարանների բաժիններում ուսուցում	Գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության որակի ապահովում, նշված բաժիններում կրթության որակի բարձրացում	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Ծրագրի շրջանակներում իրականացվել է նշված բաժիններում սովորողների ուսման վարձավճարների փոխհատուցման գործընթացը: 2014 թ. «Երաժշտական և արվեստի դպրոցների ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցում» ծրագրի շրջանակում, մարզի 19 երաժշտական և արվեստի դպրոցներից 377 սովորող ստացել է ուսման վարձավճարի փոխհատուցում:
2014 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի «Մշակութային միջոցառումների անցկացում» ծրագրի շրջանակներում թվով 7 միջոցառումների անցկացում	Ազգային, պետական, հոբելյանական տոների և միջոցառումների արժևորում, մշակութային բարիքների մատուցում	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվել են «Բանակի օր», «Մայրության և գեղեցկության տոն», <<Շիրակ-Ջավախք մշակութային օր>>, <<Երիտասարդ նկարիչների միջազգային երրորդ Պլեներ>>, <<Շիրակ-Արցախ մշակութային օր>>, <<Ուսանողության միջազգային օր>> և <<Դասական երաժշտության օր>> մշակութային միջոցառումները
Տարաբնույթ մշակութային միջոցառումներ, փառատոներ կապված պետական և ազգային տոների, հիշարժան տարեթվերի և այլ մշակութային իրադարձությունների հետ	Մշակութային կյանքի աշխուժացում, մշակութային բարիքների մատուցում	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն համայնքներ, այլ կազմակերպություններ	Իրականացվել են պետական մշակութային քաղաքականությունից բխող մի շարք մշակութային միջոցառումներ (Ամփոփ տեղեկատվությունը ներառված է վերը նշված հաշվետվությունում)
Մարզի գրադարանների, թանգարանների, մշակութային կրթական հաստատությունների, թատերահամերգային կազմակերպությունների և երիտասարդության	Առանձին ոլորտների զարգացում	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն համայնքներ, այլ կազմակերպություններ	Մարզի գրադարանները և թանգարանները շարունակել են իրենց բնականոն գործունեությունը (Շիրակի մարզային գրադարանի գրքային հավաքածուն համալրվել է և սուբսիդային հատկացումների հաշվին կատարվող գնումների (235կտոր ,որից՝ 223 գիրք, 12 պարբերական) և նվիրատվությունների (1951կտոր) միջոցով, Հունիսի 25-ին Շիրակի մարզի համայնքային

հետ տարվող աշխատանքներ			գրադարաններին տրամադրելու նպատակով “Գրքի և հրատարակչական գործի կենտրոն” ՊՈԱԿ-ի կողմից մարզային գրադարանին է հանձնվել է 1760 կտոր գիրք), ստեղծվել է ՀՀ Շիրակի մարզպետին առընթեր երիտասարդական խորհուրդ
Աջակցություն մարզային և հանրապետական փառատոների, տոնախմբությունների, հյուրախաղերի, կազմակերպմանը և անցկացմանը, ինչպես նաև միջազգային փառատոների մասնակցության ապահովում	Ստեղծագործական գործունեության խթանում, միջմշակութային փորձի փոխանակման աջակցում	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն համայնքներ, այլ կազմակերպություններ	Ապահովվել է Շիրակի մարզի պատանի և երիտասարդ ստեղծագործողների մասնակցությունը մի շարք հանրապետական փառատոների (Ամփոփ տեղեկատվությունը ներառված է վերը նշված հաշվետվությունում)
Աջակցություն՝ գյուղական համայնքներում մշակույթի տների, ակումբների, կրթական հաստատությունների գործունեության նկատմամբ	Մշակութային կյանքի աշխուժացում, մշակութային գործունեության խթանում և մասսայականացում	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն համայնքներ, այլ կազմակերպություններ	Գնահատվել է մարզի համայնքների մշակութային կազմակերպություններիշենք-շինությունների վիճակը, ըստ առաջնահերթության կազմվել է հիմնանորոգման ենթակա շինությունների ցանկը և ներկայացվել համապատասխան գերատեսչություններին: Մարզի գյուղական համայնքներում մշակութային գործունեությունը իրականացվել է երաժշտական և արվեստի դպրոցների, մշակույթի տների և ակումբների միջոցով: Պետ. բյուջեի միջոցների հաշվին վերանորոգվել է Վարդաքար համայնքի մշակույթի տան տանիքը:

Խնդիրները

ՀՀ Շիրակի մարզում մշակույթի ոլորտի հիմնախնդիրները կապված են հիմնականում մշակութային հաստատությունների շենք-շինությունների, գյուղական համայնքներում մշակույթի տների և ակումբների, գրադարանների, թանգարանների, պատմամշակութային հուշարձանների, նյութական և ոչ նյութական մշակութային արժեքների, արվեստի ճյուղերի պահպանման և զարգացման, երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների արդիականացման հետ: Կարևոր խնդիր դեռևս մնում է Շիրակի երկրագիտական թանգարանի, Գյումրու ժողովրդական գործիքների և սիմֆոնիկ պետական նվագախմբերի շենքերի, կիսաքանդ կառույցներում գտնվող որմնանկարների վերականգնման և պահպանման հարցերը: Ոլորտում առկա է նաև մասնագետ կադրերի պատրաստման և վերապատրաստման խնդիրը:

Քաղած դասերը և հետագա քայլերը

Անցկացված միջոցառումները բացահայտել են նոր տաղանդներ, բարձրացրել են մշակութային մրցակցային ոգին, հնարավորություն են ընձեռել բնակչությանը որակյալ մշակութային բարիքներ մատուցելու, որը իր հերթին խթան է հանդիսացել աճող սերնդի գեղագիտական ճաշակի բարձրացման, ազգային հոգևոր և նյութական մշակութային արժեքներին հաղորդակցվելու համար:

2015 թվականին մշակույթի ոլորտում իրականացվելիք միջոցառումները և ծրագրերը միտված են լինելու հիմնականում մշակույթի տարածմանը և զարգացմանը, մշակութային բարիքների մատուցմանը, ազգային մշակութային արժեքների պահպանմանը, այլ մարզերի հետ համագործակցության խորացմանը, համամարզային միջոցառումներին հնարավոր շատ թվով գյուղական համայնքների ներգրավելուն: Կշարունակվի նաև միջազգային մշակութային համագործակցությունը:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ